ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հոկտեմբերի 2013 թվականի N 157-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 199-Ա ԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 182-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և համաձայն ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 10-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելուն համաձայնություն տալու մասին>> N 874-Ա որոշման, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> N 199-Ա որոշմամբ հաստատված ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր 68-2.1-1) անձնագրի 11-րդ կետից՝

1) հանել <<խ>> ենթակետը,

2) <<լե>> ենթակետի <<եկամտահարկի>> բառը փոխարինել <<եկամտային հարկի>> բառերով.

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2009 թվականի նոյեմբերի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> N 182-Ա որոշմամբ հաստատված՝

1) հաշվապահական հաշվառման բաժնի պետի և գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 68-2.2-22, 68-2.3-22) անձնագրերի 11-րդ կետից՝

ա. հանել <<ը>> ենթակետը

բ. <<գ>> ենթակետի <<եկամտահարկի>> բառը փոխարինել <<եկամտային հարկի>> բառերով.

2) հաշվապահական հաշվառման բաժնի առաջին կարգի մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-4.1-22) անձնագրի 11-րդ կետի <<բ>> ենթակետի <<եկամտահարկի>> բառը փոխարինել <<եկամտային հարկի>> բառերով:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2013թ. հոկտեմբերի 21
ք. Կապան